

Տեղի ունեցավ ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի հերթական մամուլի ասուլիսը

07.07.2021

2021 թվականի հուլիսի 7-ին Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը մարզային և հանրապետական սփուման ՋԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ ամփոփեց իր աշխատանքային գործունեության վերջին 12 ամիսները:

Մինչ ասուլիսի մեկնարկը՝ մարզպետը և ՋԼՄ ներկայացուցիչներն այցելեցին Շողակաթ խոշորացված համայնքի Աղբերք բնակավայրի վարչական տարածքում կառուցված և շահագործման հանձնված 5 մեգավատ հզորության արեւային ֆոտովոլտային կայան, որտեղ մարզպետը ՋԼՄ-ներին ներկայացրեց մարզում այլընտրանքային էներգետիկայի արտադրության ներկա ծավալները եւ զարգացման հեռանկարները: «Այլընտրանքային էներգիայի արտադրությունը մեր մարզի զարգացման գերակա ուղղություններից մեկն է, եւ մենք հետեւողականորեն առաջ ենք տանում մեր քաղաքականությունը: Այս պահի դրությամբ մենք այլընտրանքային էներգետիկայի արտադրության նպատակով հողի կատեգորիան փոխել ենք 387 հեկտարի վրա, որոնցից 36 հեկտարի վրա այս պահին ընթանում են շինարարական աշխատանքներ: Արևային ֆոտովոլտային խոշոր կայանի կառուցումը մեկնարկում է նաեւ Մեծ Մասրիկում, 132 հեկտարի վրա: Շինարարական աշխատանքների ավարտից հետո միայն Մեծ Մասրիկի արեւային ֆոտովոլտային կայանում կարտադրվի 53 մեգավատ ժամ հզորության հոսանք: Իսկ այս պահի դրությամբ Շողակաթ խոշորացված համայնքի տարածքի կայաններում, որոնք կառուցվել են վերջին երեք տարիների ընթացքում, արտադրվում է 16 մեգավատտ հզորության հոսանք: Մնացած կայանների շինարարության ավարտից հետո Շողակաթի արեւային կայանները միասին վերցրած կարտադրեն 36 մեգավատտ հոսանք: Շողակաթի արեւային կայանների կառուցման արդյունքում ներդրումները կազմել են շուրջ 15 միլիարդ դրամ: Շինարարության ընթացքում բացվել է շուրջ 700 ժամանակավոր աշխատատեղ, իսկ յուրաքանչյուր կայանի շահագործման դեպքում առաջանում է մինչև 10 հիմնական աշխատատեղ», - ներկայացրեց Գնել Սանոսյանը:

Այցի հաջորդ կանգառը Շողակաթ-Վարդենիս միջպետական նշանակության ճանապարհի շինհրապարակում էր: Ինչպես ներկայացրեց մարզպետ Գնել Սանոսյանը, հիմնանորոգվող ճանապարհի երկարությունը է 20,9 կիլոմետր է: Երկշերտ ասֆալտբետոնյա ծածկի տեղադրման մակերեսը կազմում է 142 հազար 200 քառակուսի մետր և ևս 4259 քառակուսի մետր մակերեսով հիմնանորոգման աշխատանքներ կիրականացվեն մուտքերում և իջատեղերում: Կվերանորոգվեն նաև կամուրջները և անցումները, կիրականացվեն ճանապարհի կահավորման աշխատանքներ: Հիմնանորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 1 միլիարդ 995 միլիոն 500 հազար դրամ: «Հայտարարված էր մրցույթ, որի արժեքը կազմում էր 2 միլիարդ 727 միլիոն դրամ: Մրցույթի արդյունքում շինարարական կազմակերպությունը այդ մրցույթը շահել է 1 միլիարդ 995 միլիոն դրամով: Այսինքն միայն այս շինարարական մրցույթի արդյունքում պետությունը շահել է 737 միլիոն դրամ: Այս ճանապարհի շինարարական աշխատանքների ավարտից հետո, որը նախատեսված է մինչև այս տարվա վերջը, ամբողջանում է Ծովագյուղ-Շողակաթ-Վարդենիս միջպետական ճանապարհի հիմնանորոգման ծրագիրը, որով էլ լուծվում է տնտեսական և ռազմավարական նշանակության կարևորագույն հիմնախնդիրը, որը լուծում չէր ստացել անգամ ԽՍՀՄ ժամանակներում: Այս ճանապարհի հիմնանորոգմամբ նոր զարկ է տրվում գյուղատնտեսության, տուրիզմի, այլ ոլորտների զարգացմանը», - նշեց մարզպետը:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «ԱԱԲ պրոյեկտ» կազմակերպությունը: Աշխատանքային խումբը հերթական կանգառը կատարեց Շողակաթ-Վարդենիս ավտոճանապարհի մի հատվածում, որտեղ իրականացվում է Սևանա լճի ջրի բարձրացման հետևանքով առաջացած փլվածքի վերականգնում: Այն վերականգնվում է զարիոնային շարվածքով, 730 գծամետր երկարությամբ և 3 մետր բարձրությամբ:

Ասուլիսն անցկացվեց Շողակաթ համայնքի Շառլ Ազնավուրի անունը կրող նորակառույց այգի-պուրակում: Բացելով ասուլիսը՝ Գնել Սանոսյանը խոսեց վերջին մեկ տարում Գեղարքունիքի մարզպետարանի հետ գործակցած պետական, հոգևոր և մասնավոր կառույցների

դերակատարության մասին: «Շնորհակալություն եմ ուզում հայտնել Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունիաց թեմին, մարզի ուժային կառույցներին, առողջապահական հաստատություններին, մի շարք հասարակական կազմակերպությունների՝ պատերազմական և հետպատերազմական ժամանակահատվածներում մարզպետարանի կողքին գտնվելու և ցուցաբերած աջակցության համար», - նշեց Գնել Սանոսյանը:

Գեղարքունիքի մարզպետը հակիրճ անդրադարձավ Գեղարքունիքի մարզպետարանի տարբեր ստորաբաժանումների կողմից հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքներին, մարզի կենսագործունեության տարբեր ոլորտներում իրականացված ծրագրերին, գրանցված ձեռքբերումներին, առկա խնդիրներին և առաջիկա անելիքներին: «Ինչու ենք ասուլիսը նախատեսել անցկացնել Շոդակաթ համայնքում: Քանի որ այս համայնքում 2018-2021 թվականների ընթացքում պետության կողմից իրականացված և իրականացվող սուբվենցիոն ծրագրերի թիվ հասնում է 44-ի, իսկ ներդրումները կազմում են 500 միլիոն դրամ: Այս համայնքի մեջ մտնող 6 փոքր բնակավայրերում հնարավոր չէր լինի այսքան մեծածավալ ծրագրեր իրականացնել, եթե չլինեք համայնքների խոշորացման քաղաքականությունը: Մինչդեռ այսօր համայնքի կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերում ՀՀ կառավարություն-համայնք համագործակցության արդյունքում իրականացվել են բազմաբնույթ սոցիալ-տնտեսական և կենսական նշանակության ծրագրեր: Լուծվել են ենթակառուցվածքների զարգացման հետ կապված հիմնական խնդիրները», - ասաց Գնել Սանոսյանը:

2021 թվականի գարնանը Շոդակաթ խոշորացված համայնքում, առաջինը մարզի պատմության մեջ, տեղադրվել ու շահագործվում է հակակարկտային 6 կայան: Կայաններից երկուսը տեղադրվել է Շոդակաթ բնակավայրում, երկուսը՝ Ծափաթաղ, մեկական կայաններ էլ՝ Ջիլ և Արտանիշ բնակավայրերում:

Աշխատանքները իրականացվել են ՀՀ կառավարության սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 12 միլիոն 600 հազար դրամ:

Իր խոսքում Գեղարքունիքի մարզպետը նշեց, որ 2021 թվականին Գեղարքունիքի մարզի տարբեր համայնքներից ՀՀ կառավարության միջգերատեսչական հանձնաժողովի հաստատմանն է ներկայացվել 136 կենսական նշանակության ծրագրեր, որոնց ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 7 միլիարդ դրամ: Այս ծրագրերից ասֆալտապատում է նախատեսվում 36 համայնքում, մանկապարտեզի կառուցում՝ 8, խմելու ջրագծերի կառուցում՝ 19, ոռոգման ցանցերի կառուցում՝ 13, մշակույթի տների կառուցում և հիմնանորոգում՝ 7 համայնքներում: Նախատեսվում են նաև այլ բնույթի ծրագրեր և 1 բազմաֆունկցիոնալ ապաստարանի կառուցում:

Խոսելով քաղաքաշինության ոլորտի մասին՝ մարզպետը նշեց, որ այս պահին պետական և Համաշխարհային Բանկի միջոցների հաշվին կառուցվում են Գեղհովիտի, Շատջրեքի, Լեռնահովիտի և Ջիլի դպրոցական շենքերը և Մարտունու բժշկական կենտրոնի շենքը: Սևանա լճի ջրի բարձրացման հետևանքով առաջացած փլվածքները վերականգնվում են լճի ափամերձ հինգ տարբեր հատվածներում՝ դարձյալ պետական միջոցների հաշվին: Անդրադառնալով առողջապահության ոլորտին՝ մարզպետ Գնել Սանոսյանը նշեց, որ հաշվետու

ժամանակահատվածում այս համակարգը գործել է գերծանրաբեռնված ժամանակացույցով, ինչը պայմանավորված է եղել համավարակով և Արցախյան պատերազմով: Սևանի և Մարտունու բժշկական կենտրոններում ստեղծվել է կորոնավիրուսային հիվանդության բժշկական օգնության և սպասարկման հիվանդանոցային ծառայություններ մատուցող բաժանմունքներ, Վարդենիսի հիվանդանոցում և Մարտունու բժշկական կենտրոնում պատերազմի օրերին մատուցվել են հոսպիտալային ծառայություններ: «2021 թվականից «Գավառի ԲԿ»-ն համալրվել է նոր մասնագետներով: Ամեն շաբաթ Երևանից այստեղ հրավիրվում են բարձրակարգ մասնագետներ և կազմակերպվում են բաց դռների օրեր: Առ այսօր սպասարկվել է մոտ 700 այցելու: «Սևանի ԲԿ»-ում էլ խոսրտագրություն, դուպլեքս սպիրոմետրիա, գաստրոսկոպիա հետազոտությունները իրականացվում են պետական պատվերի շրջանակներում: «Մարտունու ԲԿ»-ում վերանորոգվել են մի շարք կաբինետներ, որոնք հարմարավետություն են ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժի համար, ձեռք է բերվել 40 խմ ժամ հզորությամբ թթվածնային ստացիոնար կայան, որը կապահովի մարզի բուժօգնության պահանջարկը: Ներդրվել է էլեկտրադիագնոստիկայի ծառայություն: Այն ունի նաև անոթների գերձայնային՝ դուպլեքս հետազոտության հնարավորություն: Ձեռք է բերվել վերջին սերնդի բազմաֆունկցիոնալ ռենտգեն

սարք: «Մարտունու ծննդատանը» թարմացվել են բուժգործիքների մոտ 30%-ը: «Վարդենիսի պոլիկլինիկան» ձեռք է բերել ԷԿԳ-ի նորագույն ապարատ, LOR բժշկական սարքավորումների հավաքածու: «Վարդենիսի հիվանդանոցը» համագործակցելով «Ամբո Նայաստան» բարեգործական հիմնադրամի հետ՝ ձեռք է բերել 33 ֆունկցիոնալ մահճակալներ: Հիվանդանոցն ապահովվել է 3 արևային ջրատաքացուցիչներով: Մարզի մի շարք բուժհիմնարկներում ևս իրականացվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ, ձեռք է բերվել գրասենյակային գույք, շտապօգնության ավտոմեքենաներ, լաբորատոր ժամանակակից սարքավորումներ, անցկացվել են նոր ջրագծեր: «Զինիշյան» հիշատակի հիմնադրամի աջակցությամբ վերջերս տրվեց Սևանի մանկական վերականգնողական կենտրոնի գործունեության մեկնարկը», - նշեց Գնել Մանույանը:

Մարզպետը խոսեց նաև գյուղատնտեսության ոլորտում առաջացած իրավիճակի մասին՝ պայմանավորված տևական երաշտով: «Տեղումների տևական բացակայության պատճառով մարզի ֆերմերային և գյուղացիական տնտեսություններում դժվարին իրավիճակ է ստեղծվել: Բավարար աճ չեն ապահովել հացահատիկի արտերը, ցանովի և բնական խոտհարքերը: Այս իրավիճակի հաղթահարման համար կարևոր է գյուղատնտեսության ապահովագրական համակարգի ներդրումը: Մյուս կողմից էլ հարկավոր է զարգացնել կերային մշակաբույսերի արտադրությունը, որպեսզի գյուղացին կարողանա ապահովել անասունների ձմեռացման շրջանը: Ինչ վերաբերում է մարզի Վաննան և Տորֆավան համայնքներում բռնկված «Սիբիրյան խոց» հիվանդությանը, ապա պետք է ասել, որ վերջին օրերի ընթացքում համաճարակը կանխարգելված է և բռնկման նոր դեպքեր չեն արձանագրվել, իսկ ողջ անասնազվաքանակը ենթարկվել է կրկնակի պատվաստման», - իր խոսքում նշեց Գեղարքունիքի մարզպետը: Գնել Մանույանը լուրջ ձեռքբերում համարեց Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում կոշտ թափոնների կառավարման ծրագրի իրականացումը, որի շրջանակներում Կոտայքի մարզում արդեն կառուցվում է աղբի վերամշակման գործարան, որի շահագործումից հետո Գեղարքունիքի մարզի կենցաղային աղբը ամբողջությամբ կտեղափոխվի վերամշակման, դրանով իսկ լուծելով մարզի բնապահպանական կարևոր հիմնախնդիրներից մեկը: Մարզպետը նշեց նաև, որ 2021 թվականի հունիս ամսվա ընթացքում մարզում նկատվել է զբոսաշրջիկների մեծ հոսք, որը պայմանավորված է նաև ջերմային բարձր ռեժիմով: Նկատելի է նաև օտարերկրյա զբոսաշրջիկների հոսք մարզի տեսարժան վայրեր: «Մենք աշխատում ենք զարգացնել ենթակառուցվածքները, որպեսզի զբոսաշրջիկների համար ստեղծվեն գրավիչ պայմաններ, ինչն էլ իր հերթին նպաստում է տուրիզմի զարգացմանը մարզում», - նշեց մարզպետը:

Գնել Մանույանը խոսեց նաև մարզի կրթության, մշակույթի և սպորտի, տեղական ինքնակառավարման, երեխաների իրավունքների, հանրային իրազեկման, զորահավաքային նախապատրաստության, քարտուղարության, սոցիալական ապահովության, ֆինանսական, բնապահպանական, հողաշինարարության և այլ ոլորտներում կատարված աշխատանքների, գրանցված հաջողությունների և անելիքների մասին:

Գեղարքունիքի մարզպետ Գնել Մանույանը ասուլիսի մասնակիցներին տեղեկացրեց նաև Գեղարքունիքի մարզպետարանի կողմից ստեղծված Գեղարքունիքի մարզի միասնական առցանց նորաստեղծ հարթակի մասին / grup.am/:

«Հարթակում անվճար էջ ունենալու հնարավորություն կստանան ՀՀ Գեղարքունիքի մարզի կրթության, մշակույթի, սպորտի, քաղաքացիական հասարակության, առողջապահության և տուրիզմի ոլորտի մոտ 400 կազմակերպություններ:

Հարթակի առավելությունը կայանում նրանում, որ և՛ բովանդակություն ստեղծողները, և՛ դրանց սպառողները միևնույն տեղում են, ինչը մի քանի անգամ բազմապատկում է ինֆորմացիայի տարածման հնարավորությունը:

Հարթակը համագործակցելու հնարավորություն է ստեղծում ինչպես նույն ոլորտի, այնպես էլ տարբեր ոլորտների կազմակերպությունների միջև:

Մարզպետարանի համար Հարթակը նաև մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեության մոնիտորինգի հնարավորություն է ստեղծում:

Տուրիզմի բաժնում փորձ է արվելու ներկայացնել մարզի ողջ զբոսաշրջային ներուժը՝ տեսարժան վայրերը, զբոսաշրջային ծառայությունները, հյուրատները, ինտերակտիվ քարտեզները և այլն: Նման Հարթակ հանրապետությունում ստեղծվում է առաջին անգամ:

Ասուլիսի ընթացքում Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը պատասխանեց ԶԼՄ ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցերին: Դրանք վերաբերում էին մարզի սահմաններին 2021 թվականի մայիսի 12-ից հետո առաջացած իրավիճակին, մարզում մշակութային և զբոսաշրջային կյանքի աշխուժացմանը, մարզի բնապահպանական հիմնախնդիրներին, ներդրումային ծրագրերին, ենթակառուցվածքների զարգացմանը և հետընտրական գործընթացներին:

Ասուլիսի ավարտից հետո ԶԼՄ ներկայացուցիչները մասնակցեցին Շողակաթ համայնքի նորակառույց այգի-պուրակի բացման հանդիսավոր արարողությանը: